



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

### **ԼԻՆՍԻ ՀԻՄՆԱՐԿԸ ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ԻԾԵԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԹԵՄԻՍ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒՆ**

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ազգային Վարչութիւնն ու Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինը այսու սրտի անհուն գոհունակութեամբ կը յայտարարեն, որ Լինսի Հիմնարկը, հաւատարիմ մնալով տարիներու իր բարեսիրական աւանդութեանց, այս տարի եւս իշխանական նուիրատուութիւն մը կատարեց Թեմիս Ազգային Վարժարաններուն: Նուիրատուութեան ընդհանուր գումարն է մէկ միլիոն տոլար, բաշխուած հետեւեալ դպրոցներուն ու մանկամտօրներուն.-

Ազգային Մեսրոպեան երկրորդական վարժարան  
Ազգային Ռոզ եւ Ալեք Փիլիպոս երկրորդական վարժարան  
Ազգային Ֆերահեան երկրորդական վարժարան  
Ազգային Վահան եւ Անուշ Շամլեան վարժարան  
Ազգային Արի Կիրակոս Մինասեան վարժարան  
Ազգային Գռուզեան-Չաքարեան-Վասպուրական վարժարան  
Ազգային Լեւոն եւ Յասմիկ Թալեան մանկամտօր  
Ազգային Ռիչըրտ Թիւֆէնքեան մանկամտօր

Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը, Ազգային Վարչութիւնն ու Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինը շնորհակալութիւն կը յայտնեն Լինսի Հիմնարկի տնօրէնութեան ու պատասխանատուներուն, որոնք ընդառաջեցին մեր խնդրանքին եւ անգամ մը եւս զօրակից հանդիսացան մեր վարժարաններուն: Այս յատկացումները պիտի ծառայեն մեր դպրոցներու բարգաւաճման ծրագիրներու իրականացման:

«Երախտապարտ ենք Լինսի Հիմնարկին, իր այս նորագոյն նուիրաբերումին, ինչպէս նաեւ տարիներու ընթացքին անոր կատարած բարերարութիւններուն համար. այս աջակցութիւնը կարելոր բաժին ունեցած է մեր վարժարաններուն բարգաւաճման ծրագիրներու իրականացման մէջ», ըսաւ Առաջնորդ Սրբազանը:

**THE LINCY FOUNDATION MAKES A ONE MILLION DOLLAR  
ALLOCATION TO PRELACY SCHOOLS**

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Executive Council, and the Board of Regents are pleased to announce that The Lincy Foundation has made a generous donation of one million dollars to Prelacy Schools.

The contribution was allocated to the following schools:

Armenian Mesrobian School  
Rose and Alex Pilibos HighSchool  
Ferrahian High School  
Vahan and Anoush Chamlian School  
Ari Guiragos Minassian School  
Krouzian-Zekarian-Vasbouragan School  
Levon and Hasmig Tavlian Pre-School  
Richar Tufenkian Pre-School

The Prelate, Executive Council, and the Board of Regents convey their thanks and gratitude to The Lincy Foundation for their latest contribution to the growth and advancement of our Prelacy Schools. “We are grateful to The Lincy Foundation for this most recent donation and for their benevolence throughout the years, which has been pivotal to the substantial progress we have witnessed in our schools,” stated the Prelate on this occasion.

**WESTERN PRELACY SECRETARIAT**